ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԹՈՒՐՔ - ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

1917թ. ապրիլի 6-ին, հաղթահարելով «մեկուսացման» վերաբերյալ Մոնրոյի դոկտրինի բարությունը, ԱՄՆ-ը մտավ համաշխարհային պատերազմի մեջ: Թեև Վաշինգտոնի ուշադրությունը գերազանցապես կենտրոնացած էր եվրոպական գործերի վրա, սակայն Մերձավոր Արևելքը ևս լրջորեն մտնում էր ԱՄՆ-ի երկրաքաղաքական շահերի սեռում հետաքրքրությունների շրջանակի մեջ: Նկատի ունենալով Օսմանյան կայսրության անդամակցությունը Եռյակ դաշինքին, 1917թ. ապրիլին ԱՄՆ-ը խզեց իր դիվանագիտական հարաբերությունները նրա հետ, ձեռնպահ մնալով, սակայն, պատերազմ հայտարարելուց: Այնուհանդերձ Վաշինգտոնը որոշել էր իրեն վերապահել գործողությունների կատարյալ ազատություն Թուրքիայի նկատմամբ, առավել ևս, որ Միացյալ Նահանգները վաղեմի տնտեսական ու քաղաքական հետաքրքրություններ ուներ այդ վիրխարի կայսրության նկատմամբ[1]: «Թուրքիան հանդիսանում էր պատերազմի ամենահարուստ ավարը, ավելի հարուստ, քան Շանտունը», - գրում էր ամերիկացի Ռ.Ռեկերը[2]: Ուստի պետական դեպարտամենտին հանձնարարված էր առհասարակ մերձավորարևելյան տարածաշրջանի նկատմամբ մշակել հատուկ հանձնարարականներ: Նրանցում շեշտվում էր, որ Օսմանյան կայսրությանը առնչվող խնդիրներից Վաշինգտոնին հետաքրքրում է նաև Հայաստանի հարցը[1]:

Աշխարհամարտի տարիներին իր կրած մարդկային և նյութական զոհողությունների դիմաց Միացյալ Նահանգների կառավարությունը «արդար փոխհատուցում» էր պահանջում Եռյակ համաձայնության գծով իր դաշնակիցներից: Այդ փոխհատուցման գոտու մեջ ամերիկյան կառավարությունը մտցրել էր նաև Մերձավոր Արևելքը, որտեղ փոխհատուցողի դերում պետք է հանդես գար Օսմանյան կայսրությունը: ԱՄՆ-ի քաղաքական կյանքի աչքի ընկնող դեմքերը այդ առթիվ հանդես էին եկել մի շարք հայտարարություններով: Այսպես, պրեզիդենտ Վուդրո Վիլսո-

նր հայտարարել էր. «Թուրքերը, քրիստոնյաների այդ մարդասպանները, պետք է վռնդվեն Եվրոպայից»[4]: Իսկ հանրապետական կոնգրեսմեն, ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտը 1918թ. սեպտեմբերին 6-ին կոնգրեսում հայտարարել էր. «Օսմանյան կայսրությունը պետք է տապալվի. բոլոր սուբյեկտ ժողովուրդները պետք է ազատություն ստանան. թուրքը պետք է քշվի Եվրոպայից. Հայաստանը պետք է ազատ լինի»[5]:

1918թ. հունվարի 8-ին Վուդրո Վիլսոնը ուղերձով դիմեց կոնգրեսին, որը հայտնի է Վիլսոնի «14 կետեր», կամ վիլսոնյան խաղաղության ծրագիր անունով: Այն հետպատերազմյան շրջանում նոր աշխարհակարգի ստեղծման վերաբերյալ մի ծավալուն ծրագիր էր: Ամերիկացի պատմաբան Ռ.Վոյյամսի կարծիքով. «14 կետերը» նպատակ ունեին «վերակառուցել միջազգային հարաբերությունների համակարգը ամերիկյան սկզբունքներին համապատասխան և դրանով իսկ հնարավոր դարձնել Միացյալ նահանգների տիրապետող դերը աշխարհի քաղաքական ու տնտեսական կյանքում, չդիմելով մեծ պատերազմների»[6]:

Վիլսոնի ծրագրի 12-րդ կետը վերաբերում էր Թուրքիային. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը, իրենց ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և հաստատուն ինքնիշխանություն, սակայն ներկայիս թուրքերի իշխանության ներքո գտնվող մյուս ազգությունները պետք է ստանան իրենց գոյության անվերկբա երաշխիք և ինքնուրույն զարգացման բացարձակորեն անխախտելի պայմաններ: Դարդանելը պետք է միջազգային երաշխիքների ներքո մշտապես բաց լինի նավերի ազատ անցման և բոլոր ազգերի առևտրի համար»[7]:

«Հեմբրնդհանուր հաշտության մասին» կոնգրեսում արտասանած իր ճառում Վուդրո Վիլսոնը հատուկ անդրադարձավ նաև հայկական հարցին, այն դիտարկելով նոր աշխարհակարգի ստեղծման տեսանկյունից: Այդ հարցի արծարծումով պրեզիդենտը անշուշտ արտահայտում էր Ամերիկայում ստեղծված հասարակական կարծիքը: Սակայն կասկածից վեր է, որ քաղաքականության մեջ իդեալիզմը չբացառող այդ գործիչը դրսևորում էր նաև իր սուբյեկտիվ, անձնական հակումները: Դա անթաքույց երևում է այդ հարցի վերաբերյալ նրա կատարած բոլոր հայտարարություններում: Այսպես, 1918թ. ապրիլի 22-ին նա ասել էր. «Դուք կարող եք հավատացած լինել, որ ես խոր հետաքրքրություն եմ տածում Հայաստանի ճակատագրի նկատմամբ»: Իսկ 1918թ. նոյեմբերի 18-ին պրեզիդենտը գրում էր պետական քարտուղար Ռոբերտ Լանսինգին. «Իմ հետաքրքրությունը հայերի նկատմամբ խորն է և իմ համակրանքը նրանց նկատմամբ իրոք մեծ է»[8]: Թերևս պրեզիդենտի այդ դիրքորոշման պատճառով 1918թ. սեպտեմբերի 21-ին Վիլսոնին ներկայացված ծավալուն հուշագրի մեջ շոշափվում էր նաև Հայաստանի ապագա ստատուտի վերաբերյալ հարցը: Ըստ պետական քարտուղարի առաջարկի, այն պետք

է անցներ մի որևէ երկրի, կամ երկրների խմբի հովանավորության սսսկ: Սակայն Լանսինգը դեռևս չէր նշում, թե որ պետությունը նկատի ուներ: Այսպիսով, միանգամայն ակնհայտ էր, որ ԱՄՆ-ը նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում դաշնակիցների առջև Օսմանյան կայսրության ժառանգությունից իր բաժինը ստանալու համար հարց բարձրացնելու ուղղությամբ: 1918թ. հոկտեմբերի 30-ին ստորագրելով Մուդրոսի զինադադարը, երիտթուրքական կառավարությունը ստիպված էր ընդունել պատերազմում իր պարտությունը: Պատասխանատվությունից խուսափելու համար իթթիհադի պարագլուխները փախուստի դիմեցին արտասահման: Երկրի քաղաքական կյանքի իրական տերը դարձավ 1918թ. ամռանը գլխի բարձրացած սուլթան Մեհմեդ VI Վահիդեդդինը: Օրակարգում դրված էր Օսմանյան կայսրությունը մասնատելու հարցը:

Հենց այդ օրերին թուրք ազգայնականների ապագա պարագլուխ Մուստաֆա Քեմալը որոշում է Ստամբուլից մեկնել Արևելյան Անատոլիա, որտեղ գոյություն ունեին առավել բարենպաստ ռազմաստրատեգիական և քաղաքական պայմաններ կազմակերպելու դիմադրության շարժում Թուրքիայի անդամահատման ծրագրերի դեմ: Նա արագորեն Անատոլիայում կազմակերպեց իշխանության այլընտրանքային կենտրոն:

Այդ շարժման նշանակությունը ինչպես մասշտաբների, այնպես էլ քաղաքական նշանակության առումով անհրաժեշտ խորությամբ չգիտակցվեց, կամ գուցե թերագնահատվեց, Անտանտի տերությունների կողմից: Դժբախտաբար Հայաստանում ևս ընդունակ չեղան այդ դեպքերը բավարար խորությամբ վերլուծության ենթարկելու, որի հետևանքով «հայկական հարցը» արդյունքում ունեցավ ծանր ու անդառնալի կորուստներ: Թուրքական պետությունից քաղաքական անջատման հայ ժողովրդի լոզունգը բախվելով թուրքական վերելք ապրող նացիոնալիզմի ալիքին փշուր - փշուր եղան:

Մինչդեռ Անատոլիայի խորքերում թուրք միլլի ազգայնականների նախապես փոքրիկ խմբակը հետզհետե ուժ հավաքելով դառնում էր տարածաշրջանի իրողությունների վրա ազդեցություն ունեցող լուրջ գործոն:

Կարճ ժամանակամիջոցի ընթացքում հանձինս Թուրքական Ազգային մեծ ժողովի, քեմալական շարժումը ստեղծեց նաև կառավարություն, որի հետևանքով քեմալականները դարձան Անատոլիայի, իսկ քիչ ավելի ուշ նաև ողջ փոքր Ասիայի իրական տերը:

Թուրքիայի անդամահատման սպառնալիքը շարունակում էր կախված մնալ երկիշխանության պայմաններում ապրող երբեմնի հզոր պետության վրա: Նրա ճակատագիրը լուծվելու էր Եվրոպայում, Փարիզի խորհրդաժողովում, որտեղ որպես թելադրողներ հանդես էին գալու

Թուրքիայի վաղեմի «քարեկամ», իսկ պատերազմի ժամանակ ոխերիմ թշնամի դարձած Անգլիան և Ֆրանսիան: Սակայն միջազգային ասպարեզում ավելի ու ավելի ազդու ձնով էր հնչում նաև Ամերիկայի ձայնը, որը հանձինս իր «նոր առաքյալի»՝ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի «14 կետերի» ավետում էր միջազգային հարաբերություններում նոր արդարացի կարգեր հաստատելու դարաշրջանի բացվելու մասին: Բնական է, որ դա Թուրքիայում անխոսափելիորեն արթնացնելու էր ոչ միայն նոր հույսեր, այլև հաղթանակած պետությունների հակասությունների վրա խաղալու թուրքական վարպետ դիվանագիտության համար բացելու էր վիթխարի հնարավորություններ որոշակի քաղաքական խնդիրներ լուծելու համար:

1919թ. հունվարի 18-ին վոխադարձ մրցակցության, բախումների, հակասական ծրագրերի և բացահայտ պայքարի պայմաններում բացվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը: Նրա բացման պահին Եռյակ համաձայնության բոլոր երկրները արդեն հստակեցրել էին իրենց դիրքորոշումները «թուրքական ժառանգության» հարցի վերաբերյալ: Սակայն հասկանալի է, որ սպասվում էր համառ և անզիջում դիվանագիտական պայքար, քանի որ կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում առանց մարտի հրաժարվել իր հավակնություններից այն տարածքների նկատմամբ, որոնց տիրապետումը նրանց խոստանում էր կարևորագույն տնտեսական և ստրատեգիական օգուտներ:

Չնայած խաղաղության պայմանագիրը կառուցվում էր Վիլսոնի «14 կետերի» հիմքի վրա: ԱՄՆ-ի պրեզիդենտը վստահ էր, որ իրեն հնարավորություն է տրված անմիջականորեն դիմելու ժողովուրդներին, նրանց կառավարությունների գլխի վրայով[10]: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի վարչապետները ու արտաքին գործերի մինիստրները Վիլսոնի առաքելությանը նայում էին միանգամայն այլ աչքով: «Ծեր վագր» Ժորժ Կլեմանսոն, օրինակ, «14 կետերը» դիտում էր որպես քարոզչական կարգախոսներ, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից գովաբանվող «ժողովուրդների դաշինքը» նա համարում էր գրքային մարդու միամիտ երազանք: Նշելով, որ անձամբ ինքը բարձր է գնահատում Վիլսոնի գաղափարները, Կլեմանսոն անմիջապես ավելացնում էր, որ սակայն արդեն երկու հազար տարի առաջ «Քրիստոսը ևս քարոզում էր գաղափարներ, գործնականում ցույց չտալով, թե ինչպես կարելի է դրանք կյանքում իրագործել»:

1919թ. մարտի 20-ի գաղտնի նիստում Վիլսոնը առաջին անգամ տեղեկանում է Թուրքիայի բաժանման վերաբերյալ գաղտնի պայմանագրերի, մասնավորապես 1916թ. Սայքս – Պիկոյի պայմանագրի, գոյության մասին: «Սայքս – Պիկո,- հետագայում ոչ առանց սարկազմի նշել է նա,- դա հնչում է որպես թեյի վաճառքի նոր ընկերություն, գաղտնի դիվանագիտության տիպիկ օրինակ»: Դրսևորելով գաղտնի պայմանագ-

ղեղի վերաբերյալ իր կտրուկ բացասական վերաբերմունքը, այդ նիստի ժամանակ Վիլսոնը հայտարարեց, որ ինքը չի ճանաչի տարածքային հավակնությունները, եթե դրանք հիմնված չեն կառավարվողների համաձայնության վրա:

Կոնֆերանսի սկզբնական շրջանում թուրքական հարցը ընդհանրապես առանձին քննարկման չէր ենթարկվում: Այն հանդիսանում էր մի յուրատեսակ «մանրադրամ» այլ հարցերի, գլխավորապես եվրոպական խնդիրների հետ առնչվող հարցերի քննարկման ժամանակ: Սակայն թեև Թուրքիան պարտված պետություն էր, հնարավոր չէր նրան հաշվից դուրս գցել:

Փարիզի խորհրդաժողովում օսմանյան շահերը պաշտպանելու համար Ֆրանսիայի մայրաքաղաք էին մեկնել մեծ վեզիր Դամատ Ֆերիդ փաշան և նախկին մեծ վեզիր Թեվֆիկ փաշան: Այդ առթիվ Մուստաֆա Քեմալը գրում էր. «Նորին գերազանցություն մեծ վեզիրը, անկասկած, բոլոր ջանքերը կգործադրի կոնֆերանսում օտտոմանյան շահերը պաշտպանելու համար: Այդ շահերի մեջ, որոնց պրաշտպանությունը բացարձակապես անհրաժեշտ է ազգի համար, առկա են երկու հիմնական կետեր. 1. պետության ու ազգի լրիվ անկախությունը, 2. երկրի այն մասերում, որոնք իրենց կազմով գերազանցապես թուրքական են, մեծամասնությունը չպետք է զոհաբերվի փոքրամասնությանը: Անհրաժեշտ է, որ այդ երկու կետերի կապակցությամբ գոյություն ունենա կատարյալ համաձայնություն Փարիզ մեկնող պատվիրակության ծրագրի և ազգային գիտակցության ձևական պահանջների միջև: Հակառակ դեպքում ազգը կարող է հայտնվել ողբալի վիճակի մեջ և կսնգնել մի շարք անողոքելի փաստերի առջև»[11]:

Վերջապես 1919թ. հունիսի 17-ին Դամատ Ֆերիդ փաշային թույլատրվեց հանդես գալ Փարիզի խորհրդաժողովում: Նա փորձում էր օգտագործել Վիլսոնի «14 կետերը» ի շահ կայսրության ամբողջականության պահպանման: Նա երիտթուրքերի կողմից քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ, իրականացված հանցագործություններր հավասարեցնում էր այն աղետների հետ, որոնք պատերազմի ժամանակ բաժին էին ընկել «երեք միլիոն մահմեդականներին»: Սակայն Ֆերիդ փաշայի ճարպիկ «փաստարկումները» ոչ մի ազդեցություն չգործեցին խորհրդաժողովի մասնակիցների վրա:

Կլեմանսոն նշեց, որ մեծ վեզիրը «բոլորովին չի որոնում ներողության խոսքեր կառավարության (երիտթուրքական Վ.Բ.) գործած ոճիրների համար»: Միաժամանակ նա վճռականորեն մերժեց Ֆերիդ փաշայի այն պնդումը, թե իբր «Թուրքիան միշտ լավ վերաբերմունք է ունեցել իր հպատակ ազգերի նկատմամբ, որ Օսմանյան կայսրության պահպանումը անհրաժեշտ է աշխարհի կրոնական հավասարակշռության պահպանման համար, որ քաղաքակրթությունը և արդարությունը պահանջում են

լրիվ պահպանել Օսմանյան կայսրության նախապատերազմյան տարածքները և այլն: «Ոչ Եվրոպայում և ոչ էլ Ասիայում անհնարին է գտնել մի երկիր, որտեղ թուրքական կայսրության տիրապետության ընթացքում չնվազեր նրա նյութական բարեկեցությունը և ամբողջովին անկման չենթարկվեր նրա նյութական մակարդակը: Թուրքիայի նորագույն պատմությունը չի կարելի համարել ուրախության ու հպարտության ակունք».- այսպիսի բառերով էր եզրափակում իր խոսքը Կլեմանսոն[12]:

Հունիսի 23-ին թուրքական պատվիրակությունը դաշնակիցներին ներկայացրեց մի հուշագիր, որտեղ կոնկրետացվում էին թուրքական տեսակետները Օսմանյան կայսրության առանձին մասերի հետագա ճակատագրի վերաբերյալ: Այդ փաստաթղթում ոչ մի հիշատակություն չկար Կ.Պոլսի և նեղուցների վերաբերյալ, իսկ Հայաստանի մասին խուլ ու մշուշապատ կերպով ասվում էր, որ «եթե Երևանում ստեղծված Հայկական հանրապետությունը» ճանաչվի դաշնակիցների կողմից, ապա օսմանյան պատվիրակությունը կհամաձայնվի քննարկել (ad referendum) նրա հետ սահմանային գիծը»[13]:

Դամադ Ֆերիդ փաշայի հուշագիրը ամբողջապես մերժվեց կոնֆերանսի կողմից: Վուդրո Վիլսոնը հանդես եկավ կտրուկ հայտարարությամբ. «Մենք նրանց լսեցինք. սակայն նրանք դրսևորեցին առողջ դատողության կատարյալ բացակայություն... Նրանք կարծում էին, թե կոնֆերանսը բոլորովին անտեղյակ է պատմությանը և պատրաստ է կուլ տալու աներևակայելի սուտը»: «Ավելի լավ է, որ թուրքերը մեկնեն Փարիզից»[14]:

«Չորսի խորհուրդը» օսմանյան պատվիրակությանը պատասխանեց մի նոտայով, որտեղ աներկիմաստ ձևով ասվում էր, որ թուրքերը չեն կարող հույս դնել դաշնակիցների ներողամտության վրա, որ նրանք «ընդունակ չեն կառավարելու այլ ռասաների», որ առհասարակ «երբեք ընդունակություն չեն դրսևորել խաղաղ ճանապարհով զարգացնելու այն, ինչ ձեռք են բերել ռազմական ճանապարհով»[15]:

Քեմալականները, որոնք ուշի-ուշով հետևում էին Փարիզի խորհրդաժողովի աշխատանքներին, խիստ դժգոհ էին, որ Դամադ Ֆերիդ փաշայի բերանով արծարծվել է Հայաստանի վերաբերյալ հարցը: «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության» ընկերության ներկայացուցչական կոմիտեի անունից հրապարակված ուղերձում, ուղղված Ստամբուլի բնակչությանը, Մուստաֆա Քեմալը գրում էր, որ Ստամբուլի սուլթանական կառավարությունը Փարիզի կոնֆերանսում մեծ վեզիրի բերանով հայտարարել է, որ ինքը դեմ չէ, որ «արևելյան նահանգներում ստեղծվի ծավալուն Հայաստան»: «Արևելյան վիլայեթների բնակչությունը շատ է դառնացած այդ փաստով և իրեն պարտավորված է համարում պահանջել բացատրություններ»,- նշում էր Մ. Քեմալը[16]:

1919թ. մայիսի 21-ի «Երեքի» նիստում Լլոյդ Ջորջը առաջ քաշեց թուրքական հարցի կարգավորման նոր տարբերակ: Նա հայտնեց իր կատարյալ պատրաստակամությունը ոչ միայն հաստատելու իր նախկին որոշումը ԱՄՆ-ին փոխանցելու Կ.Պոլսի, նեղուցների և Հայաստանի (Կիլիկիայով հանդերձ) «լրիվ մանդատը». այլև լրացուցիչ կերպով ԱՄՆ-ին տրամադրել Անատոլիայի նկատմամբ, ինչպես նաև Ռուսահայաստանի, Ադրբեջանի և ողջ Կովկասի շրջանի «ժամանակավոր մանդատը», մինչև «ռուսական պրոբլեմի լուծումը»[17]: Այսպիսով, այդ «միասնական մանդատի» տարածքն ընդգրկում էր Կ.Պոլսից ու նեղուցների գոտուց մինչև Բաքու ընկած շրջանները. իր մեջ ընդգրկելով նաև ողջ «Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Պարսկահայաստանը»:

«Հայաստանի և Կ.Պոլսի նկատմամբ մանդատների հեռանկարը համապատասխանում էր նախագահ Վիլսոնի իդեալներին: Նրան հարկ չկար համոզելու»,- գրում էր Լլոյդ Ջորջը[18]: Իսկապես Վիլսոնը հաճույքով համաձայնվեց վերցնել այդ տարածքների նկատմամբ մանդատի իրավունքը, սակայն զգուշորեն վերապահում անելով, որ այդ հարցը պետք է վերջին հաշվով լուծի ամերիկյան ժողովուրդը: Վիլսոնյան «Կ.-Պոլսից մինչև Կովկաս» միասնական մանդատի տեսակետը խարսխված էր այն հիմնարար գաղափարի վրա, որ տարածաշրջանում տարբեր ազգերի ու ժողովուրդների, հետևաբար տարբեր շահերի գոյությունը, պարտադիր պայման է առաջադրում, որ այդ վիթխարի տարածքը գտնվի մեկ ուժային կենտրոնի հովանավորության տակ, այլապես խաղաղությունը մշտապես կբացակայի աշխարհի այդ պայթյունավտանգ գոտուց: «Թուրքիայում մանդատների գծով միջազգային հանձնաժողովի» ամերիկացի անդամներ Հենրի Քինգը և Չարլզ Կրեյնը այդ միտքը ձևակերպում էին հետևյալ կերպ. «Փոքր Ասիայում տարբեր պետությունների պրոբլեմները խիստ փոխկապակցված են, որպեսզի հնարավոր լիներ հովանավորությունը հանձնարարել տարբեր մանդատտերերին, որոնք անխուսափելիորեն միմյանց հետ կմտնեն բախման մեջ»[19]:

Ամերիկացիները նաև այն կարծիքին էին, որ տնտեսական տեսակետից Փոքր Ասիան և Անդրկովկասը իրենցից ներկայացնում են մի անբաժանելի ամբողջություն, որը հոգատար մանդատերի տեսակետից անկարելի է բաժանել»[20]: Գեներալ Հարբորդի առաքելության կարծիքով[21] միասնական մանդատի դեպքում «հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ»: Վերջապես Հարբորդի հանձնաժողովի կարծիքով, հայկական հարցը կարելի էր լուծել միայն այն դեպքում, երբ ողջ Փոքր Ասիան գտնվեր մեկ պետության՝ տվյալ դեպքում.ԱՄՆ-ի հովանավորության տակ:

Անատոլիայի մանդատը ամերիկացիներին հանձնելու որոշման դեմ դժգոհության ձայներ հնչեցին միայն ֆրանսիական պատվիրակության կողմից: Կլեմանսոն դժգոհում էր, որ ինքը տվեց Մոսուլը, տվեց Պաղես-

տինը, ոչ մի կելպ չի կարողանում ստանալ Սիրիան, իսկ այժմ իրեն գրկում են նաև Անատոլիայից: Նա նույնիսկ համարձակվեց նկատել, որ «վտանգավոր է ԱՄՆ-ին մտցնել Փոքր Ասիա»: Ծաղրի ենթարկելով Վիլսոնի ե Լլոյդ Ջորջի «ճամարտակությունները» «մահմեդական աշխարհի նշանակության մասին», Կլեմանսոն հայտարարեց, որ Կ.Պոլսից ու Հայաստանից բացի եթե Ամերիկային տրվի նաև նրանց միջև ընկած Անատոլիան. ապա դա առաջ կբերի «պառակտում ողջ եվրոպական աշխարհում»[22]:

Ֆրանսիայի վարչապետը առիթը չկորցրեց թունոտ սարկազմով դիմելու Վիլսոնին. «Երբ դուք դադարեք նախագահ լինելուց, մենք ձեզանից կսպասենք Մեծ թուրք» (ժամանակին Եվրոպայում այդպես էին անվանում սուլթանին Վ.Բ.)[23]:

Դաղտնիք չէ, որ Մերձավոր Արևելքում անգլիական բաղձանքների գլխավոր օբյեկտը Կ.Պոլիսն էր և նեղուցները: Սակայն դրանց նկատմամբ մանդատը առաջարկելով ԱՄՆ-ին ըստ երևույթին Լոնդոնը ծրագրել էր բազմաքայլ մի կոմբինացիա: Ամենայն հավանականությամբ այդ առաջարկը կլում էր փորձաքարի բնույթ: Միանգամայն հնարավոր է, որ Ամերիկայի մերժումից հետո նախատեսվում էր բարձրացնել անգլիական մանդատի վերաբերյալ հարցը:

Առհասարակ Փարիզի կոնֆերանսում առավել բարդ խնդիրը ոչ թե «օտտոմանյան ժառանգության» անգլիական կամ ֆրանսիական, այլ ամերիկյան բաժնի որոշումն էր: Նկատի ունենալով, որ այդ կոնֆերանսում ԱՄՆ-ը ակտիվ ու եռանդուն հետաքրքրություն էր դրսևորում մերձավորարևելյան գործերի նկատմամբ և սկսել էր հավակնել ղեկավար դերի «թուրքական խնդիրը» լուծելու հարցում, Անգլիան և Ֆրանսիան դիմում էին ճարպիկ դիվանագիտական խուսանավումների Վաշինգտոնի հետ բաց առճակատումից խուսափելու համար: Նրանք միանգամայն հանգիստ էին ընկալում ամերիկյան այդ ակտիվությունը, որովհետև ամերիկացիները հենց սկզբից հավակնություններ չէին ներկայացնում Օսմանյան կայսրության արաբական տիրույթների նկատմամբ, իսկ ամենակարևորը նրանք Մերձավոր Արևելքում չունեին ոչ մի զինվոր, հետևաբար այդ տարածաշրջանում նրանց կողմից որևէ տարածքի ձեռք բերումը գործնականում հնարավոր չէր: Բացի այդ, նախագահ Վիլսոնի քաղաքական դիրքերը հենց բուն Միացյալ Նահանգներում այդ ժամանակ լրջորեն թուլացել էին. նրա երկրորդ նախագահական ժամկետը ալդեն ավարտվելու վրա էր. 1918թ. միջանկյալ ընտրությունների հետևանքով նրա կողմից ղեկավարվող դեմոկրատական կուսակցությունը կոնգրեսի զույգ պալատներում կորցրեց մեծամասնությունը. երկրում և Կապիտոլիում աճում էր ընդդիմությունը նրա արտաքին քաղաքականության նկատմամբ, որը հասարակական կարծիքի և կառավարող վեր-

նախավի ազդեցիկ ուժերի կողմից գնահատվում էր որպես ծախսատար. թանկ և քիչ արդյունավետ:

Անշուշտ բազմափորձ ու թրծված քաղաքական գործարարներ Լլոյդ Ջորջը և Կլեմանսոն հասկանում էին այդ բոլորը և չէին հապաղում ի շահ իրենց օգտվել այդ բոլորից: Ի վերջո նրանց այդ հաշվարկները ճիշտ դուրս եկան: Ինչպես հայտնի է, 1919թ. նոյեմբերի 19-ին ամերիկյան սենատը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ մանդատը վերցնելուց: Դրանից հետո, 1919թ. դեկտեմբերի սկզբից, ամերիկյան պատգամավորները գործնականում դադարեցրին իրենց մասնակցությունը Փարիզի խաղաղության կոնֆերանսի աշխատանքներին: Ըստ էության ամերիկյան սենատում վերոհիշյալ քվեարկությունը իրենով նշանավորում էր նաև քաղաքական ավելի խոշոր նշանակություն ունեցող երևույթի հաստատագրում. դա այն էր, որ ԱՄՆ-ը հեռանում էր «Վերսալյան համակարգից» մասնակցություն բերելուց:

Սա նշանակում էր նաև, որ Օսմանյան կայսրության բաժանման հարցը վերադարձավ իր նկատելային դիրքին (1916թ. Սայքս-Պիկոյի պայմանագիրը) և որպես գործող անձինք ասպարեզում դարձյալ մնում էին Անգլիան և Ֆրանսիան, որոնց միջև դիվանագիտական սակարկությունները ժամանակ առ ժամանակ ընդունում էին միմյանց նկատմամբ զենք շաչեցնելու բնույթ:

Թուրքիայի նկատմամբ ամերիկյան միասնական մանդատի հարցը տարբեր ձևով ընկալվեց Ստամբուլի կառավարության և քեմալականների կողմից: Ստամբուլում թուրքական քաղաքական գործիչների և մտավորականության մի որոշ մասը, ինչպես նաև հասարակական որոշ շրջանակներ մեծ հույսեր էին կապում ԱՄՆ-ի հետ՝ երկրի կրած պարտությունից առավել փոքր վնասներով դուրս գալու համար: Նրանք ԱՄՆ-ին դիտում էին որպես Մերձավոր Արևելքում ավելի քիչ հետաքրքրություններ ունեցող երկրի, հետևաբար նաև ավելի պակաս վտանգավոր, քան Անգլիան. որը նրանց կարծիքով իրենից ներկայացնում էր թուրք ժողովրդի անկախության ու ազգային ձգտումների համար սպառնալիք ներկայացնող առաջին պետությունը: Այդ շրջանակներում գտնվում էին վիլսոնյան հռչակագրերի ուժեղ ազդեցության ներքո:

Արտահայտվելով այդ մասին, Մուստաֆա Քեմալը գրում էր. «պարտված և զինաթափ արված կնքելու հարկադրված Օտտոմանյան կայսրությունը, ինչպես միրաժը դիտող անցորդ, մի որոշ ժամանակ ապշած ու հիացած էր այդ սկզբունքների մխիթարական տեսարանից»[24]: Վիլսոնի «14 կետերը» Մուստաֆա Քեմալը գնահատել է որպես Թուրքիայի ազգային շահերին չհակասող դրույթներ: 1919թ. դեկտեմբերի 30-ին Անգորայի նոտաբերների առջև արտասանած ճառում նա ասել է. «Այդ ծրագիրը ժողովուրդներին ապահովել է ինքնորոշման իրավունք: Նրա 12-րդ կետը բա-

ցառապես վերաբերում է մեզ, մեր պետությանը և մեր ժողովրդին: … Այն ընդունելի է մեզ համար»:

Թուրքական մի շարք ազդեցիկ գործիչների կարծիքով միայն ԱՄՆ-ի վրա հենվելով հնարավոր կլիներ անդամահատել Անգլիայի «թուրքական քաղաքականությունը» (նմա՛ Թուրքիայի մասնատումը Վ.Բ.): Նրանք համոզված էին, որ «իզոլյացիոնիզմով» առաջնորդվող Ամերիկան աշխարհում միակ պետությունն է, որը կարող է օգնել Թուրքիային ելք գտնելու իր անհուսալի վիճակից և բացի այդ, միայն ԱՄՆ-ի բարեկամական օգնությունը թուրքերին՝ ազատ համաձայնության հիմքի վրա, կարող է վերականգնել խաղաղությունը Մերձավոր Արևելքում:

Սակայն Ստամբուլի քաղաքական դաշտում առկա էին նաև այլ ուժեր, օրինակ, իշխան Սաբահեդդինի կողմնակից չափավոր իթթիլյաֆականները, որոնք հանդես էին գալիս հօգուտ Թուրքիայի նկատմամբ անգլիական մանդատի և չէին ընդունում, ավելին, պայքարում էին ամերիկյան մանդատի ընդունման դեմ:

1919թ. հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին Էրզրումում տեղի ունեցած «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության» կոնգրեսում պաշտոնապես քննության չենթարկվեց Թուրքիայի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը, հավանաբար այն պատճառով, որ թուրք ազգայնականների կողմից այն դեռևս գտնվում էր ուսումնասիրության ու հստակեցման էտապում: Սակայն կոնգրեսի եզրափակիչ բանաձևում այնուամենայնիվ արձանագրվեց, կոնգրեսը ցանկալի է համարում «ցանկացած երկրի կողմից» գիտական արդյունաբերական կամ տնտեսական օգնությունը Թուրքիային, եթե այդ պետությունը ոտնձգություն չի կատարի «թուրքական տարածքների և Թուրքիայի անկախության նկատմամբ»[25]:

Մինչև «Իրավունքների պաշտպանության ընկերության» Սըվասի կոնգրեսի գումարումը (1919թ. սեպտեմբեր). Ստամբուլում թուրք գործիչների և ամերիկացիների միջև (Քինգ - Կրեյնի և այլն) ընթանում էին ինտենսիվ շփումներ: Այդ գործիչները աշխատում էին համոզել քեմալականներին, որպեսզի առաջիկա կոնգրեսում հստակորեն ճշտվի Թուրքիայի վերաբերմունքը ամերիկյան մանդատի նկատմամբ: 1919թ. հուլիսի 25-ին Բեքիր Սամի բեյը Մուստաֆա Քեմալին և Ռեյուֆ բեյին գրած նամակում մանդատի մասին արտահայտվում էր հետևյալ կերպ. «Սկզբունքորեն անկախությունը, իհարկե. ցանկալի է: Բայց միաժամանակ կասկածից վեր է, որ եթե հայտարարվի լրիվ անկախություն, ապա կայսրությունը կբաժանվի մի քանի գոտիների: Նման հանգամանքներում, իհարկե. ավելի գերադասելի է մանդատը, որը երաշխավորում է մեր տարածքային անձեռնմխելիությունը, քան անկախությունը երկու կամ երեք վիլայեթների սահմաններում: Գտնում եմ, որ լավագույն լուծումը, որը կարող է ընդունել ազգը. դա խնդրելն է, որ հաստատվի Ամե-

ղիկայի մանդատը որոշակի ժամկետով, տարածքի ամբողջականության, սահմանադրության ու արտաքին հարաբերությունների իրավունքի պահպանման պայմանով»:

Բեքիր Սամի բեյը հաղորդում էր նաև, որ այդ հարցի կապակցությամբ ինքը Սաամբուլում զրուցել է ամերիկյան ներկայացուցչի հետ, որը հանգամանորեն ծանոթացրել է իրեն ամերիկյան մանդատի պայմանների հետ, միաժամանակ առաջարկելով դիմել Վիլսոնին, ամերիկյան սենատին ու կոնգրեսին գործին ընթացք տալու համար:

Բեքիր Սամի բեյը այդ բոլորին ավելացնում էր, որ ամերիկյան ներկայացուցիչը խոստացել է ապահովել Սըվասի կոնգրեսի կողմից ընտրված պատվիրակության մեկնումը ԱՄՆ՝ ամերիկյան ռազմանավով[27]:

Իր պատասխան գաղտնագրված նամակում Մուստաֆա Քեմալը գրում էր, որ ողջ Սըվասի կոնգրեսի ընթացքում պաշտպանվում էր պետության ու ազգի կատարյալ անկախության պահպանման անհրաժեշտության մասին տեսակետը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար չի համարվում կոնգրեսի ուղղակի քննարկմանը դնել ամերիկյան մանդատի հարցը, առավել ևս, որ ինչպես գրում էր Մ. Քեմալը, «այդ մանդատի իմաստը մեզ համար ևս դեռևս լրիվ պարզ չէ»[27]:

Բեքիր Սամի բեյին ուղղված իր հաջորդ նամակում կասկածամիտ, զգույշ ու պրագմատիկ քեմալական շարժման պարագլուխը գրում էր. «թույլ տվեք ձեր կարծիքն իմանալ մեկ այլ հարցի առթիվ. ինչպիսի՞ք են այն օգուտները, որ իր համար սպասում է ամերիկյան կառավարությունը, պատրաստակամություն հայտնելով իր վրա վերցնել մանդատը, որը կարող է բազում դժվարություններ ստեղծել ԱՄՆ-ի համար: Ո՞րն է ամերիկացիների շահագրգռվածության պատճառը, առհասարակ ինչպիսի՞ք են նրանց մտադրությունները Թուրքիայի նկատմամբ[28]: Այնուհետև, ինչպիսի՞ք են լինելու Օսմանյան պետության սահմանները, արդյոք նրանք համընկնո՞ւմ են կայսրության մինչպատերազմական սահմանների հետ թե ոչ, ինչպիսի՞ տարաձայնություններ կան անգլիացիների ու ամերիկացիների միջև, արդյոք անգլիացիները ևս ձգտո՞ւմ են ստանալ Թուրքիայի մանդատը, ինչո՞ւ ամերիկացիները հրաժարվեցին Հայաստանի նկատմամբ մանդատից և այլն»:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Խալիդե Էդիպի 1919թ. օգոստոսի 10-ի նամակը Մուստաֆա Քեմալին: Նա Ամերիկայի ժամանակավոր մանդատը Թուրքիայի համար համարում էր չարյաց փոքրագույնը հետևյալ պատճառներով. ամերիկյան մանդատը ի վիճակի է լուծելու թուրքական և նույնիսկ ողջ արևելյան հարցը: Այդ դեպքում հնարավոր կլինի պահպանել Թուրքիայի ծավալուն սահմանները, քանի որ ամերիկացիները ցանկանում են ձեռք բերել Թուրքիայի նկատմամբ «միասնական ու ընդհանուր մանդատը»: «Պաշտոնական Ամերիկան չի համակրում մեր տարածքի վրա Հայաստան ստեղծելու մտադրությա-

ներ»: Իհարկե. մանդատը հայված կհասցնի թուրքերի ազգային ինքնասիրությանը: Սակայն դա այնքան էլ փտանգավոր չէ, քանի որ «Ամերիկայի կառավարական մեխանիզմը չի հանդիսանում ոչ կղերական և ոչ էլ ազգայնական»[29]:

Խալիդե Էդիպը զարգացնում էր նաև այն միտքը, որ անհրաժեշտ է միջոցներ գտնել վերացնելու համար Թուրքիայի ազգային փոքրամասնությունների կողմից օտարերկրյա պետությունների միջոցով Թուրքիային սպառնալու հնարավորությունը: Նա գտնում էր, որ ինչպիսի պայմաններ էլ որ լինեն, քրիստոնյա փոքրամասնությունները մնալու են Թուրքիայի սահմանների մեջ: Եվ հենվելով եվրոպական որևէ պետության վրա, նրանք անընդհատ բարձրացնելու են հուզումներ, առաջ բերելով օտարերկրյա միջամտություն, որի հետևանքով Թուրքիան ամեն տարի կորցնելու է իր անկախության մի մասը հօգուտ այդ փոքրամասնությունների: Քանի որ իր սահմաններում մասնատված ու թուլացած Թուրքիան ի վիճակի չի լինելու իրականացնել վերոհիշյալ բարդ խնդիրը, ուստի ելքը, ըստ նամակի հեղինակի, մանդատն ընդունելն է: Ըստ երևույթին Խալիդե Էդիպը ենթադրում էր, որ մանդատեր Ամերիկան ոչ մի պայմանով թույլ չէր տա, որ եվրոպական որևէ պետություն միջամտի իր հովանավորության տակ գտնվող երկրի ներքին գործերին: «Մենք ոչ մի տեղ չենք կարող գտնել այնպիսի հենարան, ինչպես Ամերիկան է, որն ավելի ուժեղ է, քան Եվրոպան»,- գրում էր նա: «Ամերիկան,- շարունակում էր Խալիդե Էդիպը,- միակ երկիրն է, որը հաշվի է նստում ժողովուրդների հոգեբանության հետ և ունակ է ստեղծելու ժողովրդավարական վարչակարգ... ուստի նա մեզ համար ևս, անկասկած, համարվում է առավել ընդունելի օտարերկրյա պետությունը»: Միայն Ամերիկան, ըստ Խալիդե Էդիպի, ի վիճակի կլինի 20 տարվա ընթացքում ստեղծելու նոր, մտավոր ու տնտեսական առումով անկախ Թուրքիա[30]: «Որպեսզի մենք դուրս գանք ներկա ստեղծված վիճակից,- շարունակում էր նա,- և արագ կազմակերպենք մեր պաշտպանությունը ընդդեմ ամբողջ աշխարհի, անկասկած մեզ անհրաժեշտ է այն պետության աջակցությունը, որը դրա համար ունի բավարար չափով ուժ: Եթե մենք կարողանայինք այդ նպատակով օգտագործել Ամերիկային, նրան գցելով մեր առջևը որպես մանդատեր, որը վնասազերծում է իմպերիալիստական Եվրոպայի կողմից մեզ սպառնացող անհամար փտանգները, դրանով իսկ մենք կկարողանայինք լուծել թուրքական և նույնիսկ արևելյան հարցը»:

«Ամերիկան ընդհանրապես հակված չէ Արևելքում ընդունել մանդատ,- ենթադրում էր նամակի հեղինակը,- կամ իրեն ինչ որ բանով կապել Եվրոպայում: Սակայն ամերիկացիները ձգտում են իրենց ողջ համակարգին ու իդեալներին համապատասխան, լինելու ավելի բարձր ազգ, քան եվրոպական ժողովուրդները: Այդ ձգտումը թելադրված է նրանց ինքնասիրությամբ: Եթե որևիցէ երկիր կատարյալ անկեղծութ-

յամբ ամերիկյան ազգին կանչի իրեն ցուցաբերելու օգնություն. Ամերիկան չի հրաժարվի դրանից, որպեսզի եվրոսրսյին ցույց տա, թե ինչպիսի վարչական բարձրագույն ձև կարող է կազմակերպել այդ երկրի բարգավաճության համար»:

Խալիդ Էդիպը հատուկ շեշտում էր, որ «հեղինակավոր շրջաններում վստահեցնում են, որ եթե մեր ազգային շարժումը իրեն դրսևորի դրական կողմից և չկրի հակաքրիստոնեական բնույթ, նա կգտնի Ամերիկայի աջակցությունը»:

Իր վերոհիշյալ մտքերին Խալիդ Էդիպը վերջակետ էր դնում հետևյալ եզրակացությամբ. «լինելով տեղի ունեցող իրադարձությունների վկան և նկատի ունենալով մեր երկրի ապագա մասնատման վտանգը, ես տեսնում եմ, որ մենք պետք է դիմենք Ամերիկայի օգնությանը... Մենք չպետք է ձեռքից բաց թողնենք այդ առումով մեզ համար ստեղծված բարենպաստ իրադրությունը»[32]:

Ամերիկյան մանդատը ընդունելու օգտին արտահայտվում էր նաև Անկարայում բանակային կորպուսի հրամանատար գեներալ Ալի ֆուադը, քեմալական շարժման աջքի ընկնող գործիչ Ղարա Վասիֆը և ուրիշներ: Ի դեպ, վերջինս իր տեսակետը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Եթե դա տեղի ունենա,- հեռագրում էր նա Սըվաս,- ապա ամերիկյան մանդատի օգնությամբ հնարավոր կլինի ազատվել մյուս սրիկաներից և հետագայում գործ ունենալ միայն ամերիկացիների հետ, որից հետո պայքարելը ավելի կհեշտանա»[33]:

Չնայած Վաշինգտոնի շահագրգռվածությանը, որ Սըվասի կոնգրեսում քեմալականները ընտրություն կատարեն հօգուտ ամերիկյան մանդատի, ամերիկացիները, սակայն, չէին դադարեցնում իրենց ճնշումը Ստամբուլի կառավարության վրա, որպեսզի վերջինս վերջ տա հայերի նկատմամբ քեմալականների խժդժություններին:

Այսպես, 1919թ. օգոստոսի 21-ին Կ.պոլսում ամերիկյան դեսպանությունը մեծ վեզիրին է ներկայացնում մի հուշագիր, ստորագրված Կ.պոլսում Միացյալ Նահանգների Գերագույն կոմիսար, նավատորմի փոխծովակալ Մարկ Լ.Բրիստոլի կողմից, որտեղ ասվում էր. «պրեզիդենտը ցանկանում է թուրքական իշխանություններին իրազեկ պահել, որ եթե անմիջական և արդյունավետ միջոցներ ձեռք չառնվեն կանխելու ջարդերը կամ նման սարսափներ, որոնք կատարվում են թուրքերի, քրդերի կամ այլ մուսուլմանների կողմից հայերի նկատմամբ Կովկասում և այլուր, ապա ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական շրջանների ինքնիշխանության ապահովմանը վերաբերող բոլոր որոշումները, ըստ խաղաղության պայմանների 12-րդ հոդվածի, հետ կվերցվեն, և դա առաջ կբերի թուրքական կայսրության լիակատար քայքայում և խաղաղության պայմանների լիակատար փոփոխություն: Եթե նրանք պատճառաբանություն առաջ բերեն, որ նման պատահարների վրա իրենք հսկողութ-

յուն չունեն, ապա կմատնանշվի, որ եթե նրանք հույս ունեն կայսրության որևէ շրջանի նկատմամբ ինքնիշխանություն կիրառել, ապա պետք է ցույց տան, որ ոչ միայն կամենում են, այլև, ավելին, ի վիճակի են հետ պահել իրենց ազգակիցներին և կրոնակիցներին ցազանություններ գործելուց: Հետևաբար, ոչ մի ներողություն չի ընդունվի թուրքերից, որ ի վիճակի չեն եղել կանխել ոճիրները հայերի նկատմամբ»:

Մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան պատասխանում է, որ «եթե ինքը չի կարող զորք ուղարկել վտանգված վայրերը, ապա ինչպե՞ս կարող է պատասխանատու լինել ըստ պրեզիդենտ Վիլսոնի նոտայի պայմանների», ակնարկելով, որ ռեալ իշխանությունը գտնվում է քեմալականների և ոչ թե Ստամբուլի կառավարության ձեռքերում: Իր այդ ասածը հաստատելու համար, մեծ վեզիրը ամերիկյան ծովակալ Ռեբբին կարդում է վիլայեթական տոնով գրված մի նամակ, որն իրեն էր ուղղել Էրզրումի վալիի պաշտոնակատարը: Նա գրում էր, որ ժողովրդի (իմա՝ քեմալականների) ձայնը տարբեր է կառավարության ձայնից[34]:

Ամերիկյան սենատոր Ուիլյամսը 1919թ. սեպտեմբերի 9-ին սենատին առաջարկեց մի միացյալ բանաձև, որը նպատակ էր հետապնդում լիազորել կառավարությանը ամերիկյան զորքերին օգտագործելու Հայաստանում: Այդ առաջարկությունը նաև մի փորձ էր իմանալու ամերիկյան կարծիքը Մերձավոր Արևելքում մանդատ ստանալու վերաբերյալ: Միացյալ բանաձևը ուներ հետևյալ բովանդակությունը. «Որքանով որ բրիտանական զորքերի հեռացումը Կովկասից և Հայաստանից հայ ժողովրդին անօգնական կթողնի քրդերի ու թուրքերի հարձակումների դեմ հանդիման, և որքանով որ ամերիկյան ժողովուրդը խորապես և անկեղծորեն համակրում է հայ ժողովրդի ազատության, խաղաղության և առաջադիմության բաղձանքներին, այդ իսկ պատճառով Ամերիկայի Միացյալ Նահանգների կոնգրեսի սենատի և ներկայացուցիչների պալատի կողմից պետք է որոշվի, որ Միացյալ Նահանգների պրեզիդենտն այսու լիազորվում է օգտագործելու Միացյալ Նահանգների այնպիսի ցամաքային ու ծովային ուժեր, որոնք, նրա կարծիքով, նպատակահարմար կլինեն Հայաստանում խաղաղություն և անդորրություն պահպանելու համար, մինչև որ այդ երկրի գործերի լուծումն ավարտվի ազգերի միջև կնքված պայմանագրով»:

Այս միջնորդման նկատմամբ ԱՄՆ-ում գործող ընդդիմությունն այն միտքը զարգացրեց, որ Միացյալ Նահանգները բնավ պատերազմի մեջ չեն եղել Թուրքիայի հետ և հետևաբար նրա դեմ չի կարելի օգտագործել զորքեր: Առհասարակ ընդդիմությունը այս հարցի շուրջը ուժեղ աղմուկ բարձրացրեց[35]:

Նկատի ունենալով, որ Սըվասը դարձել էր քեմալական շարժման կարևոր կենտրոններից մեկը, գեներալ Հարբորդը իր հանձնաժողովի հետ այցելեց նաև այդ քաղաքը և շփումների մեջ մտավ ազգայնական-

ների հետ: Այդ առթիվ Կաստամունիի վալի Ֆերիդ բեյը և նույն քաղաքի պարետ գնդապետ Օսմանը հաղպրդում էին Մուստաֆա Քեմալին, որ Սվասից ամերիկյան գեներալը հաղորդել է Ստամբուլ, որ Թուրքիայում ազգային շարժման առաջացումը ունի օբյեկտիվ պատճառներ և հանդիսանում է միանգամայն օրինական:

Նրա այդ կարծիքը ոգևորել էր նամակի հեղինակներին, որոնք գտնում էին, որ քեմալականները հենվում են ռեալ ուժի վրա և տերությունների ոչինչ չի մնում, եթե ոչ ընդունել իրենց «արդարացի պահանջները»: Սակայն վախենալով, որ «իմպերիալիստների» հետ շփումները կարող է վարկաբեկել քեմալական շարժումը, Ֆերիդ բեյը և Օսմանը թախանձագին խնդրում էին իրենց գործընկերներից, որ հանուն ազգային շարժման անվտանգության չքողազերծեն «մեր գաղտնի շփումների հարցը ինչպես ամերիկացիների, այնպես էլ անգլիացիների հետ»[36]:

Ամերիկյան մանդատի հարցը Սվասի կոնգրեսում քննության ենթարկվեց նրա երկու նիստերում (1919թ. սեպտեմբերի 8-ին և 9-ին): Այդ նիստերին մասնակցում էր նաև Կ.Պոլսից եկած Կրեյնի ներկայացուցիչ ոմն Էդգար Լուիս Բրաուն, որն իրեն անվանում էր լրագրող, բայց իրականում հետախույզ էր: Մուստաֆա Քեմալը նրա մասին արտահայտվել է հետևյալ կերպ. «դա մի երիտասարդ էր, մտավոր առումով չափազանց զարգացած և զգայուն զրուցակից»: Քեմալը հայտնում էր նաև, որ Բրաունը հանդես էր գալիս իբրև մասնավոր անձ: Իսկ ամենատարօրինակը այն էր, որ այդ լրագրողը, ինչպես նշում էր Մուստաֆա Քեմալը, «ոչ միայն չի ասել, որ Ամերիկան կհամաձայնվի ընդունել (Թուրքիայի Վ.Բ.) մանդատը, այլև հայտարարեց, որ ամենայն հավանականությամբ, նա կհրաժարվի ընդունելու այն»: Դժվար չէ կռահել, որ միստեր Բրաունը պատկանում էր պրեզիդենտ Վիլսոնի քաղաքականության նկատմամբ ընդդիմության շարքերում:

Սվասի կոնգրեսում մանդատի հարցի շուրջը քեմալականների միջև բորբոքվեց սուր պայքար: Պատգամավորների մի մասը հանդես էր գալիս հօգուտ ամերիկյան մանդատն ընդունելու: Եղել են նաև հակառակորդներ: Քննարկումը հիմնականում գնացել է այն հարցի շուրջը, թե Թուրքիան պետք է մնա որպես անկախ պետություն, թե՞ համաձայնվի մանդատի հետ: Մի շարք պատգամավորներ, օրինակ, Ռեֆեթ բեյը, Կարա Վասիֆ բեյը և այլն հայտնում են այն տեսակետը, որ մանդատ հասկացությունը և անկախությունը չեն հանդիսանում իրար հակասող երևույթներ: «Մենք կանգնած ենք ամերիկյան երաշխիքները ընդունելու անհրաժեշտության, այսինքն մեր նկատմամբ մանդատ հաստատվելու պարտադրանքի առջև,- հայտարարում է Ռեֆեթ բեյը: Չէ՞ որ հնարավոր չէ, որ XX դարում մի ժողովուրդ, որն ունի հինգ հարյուր միլիոն լիրայի հասնող պարտք, քայքայված և ոչ մեծ արտադրողականությամբ հողեր և մաքսիմում տասից մինչև տասնհինգ միլիոն պետական եկամուտներ,

կարողանա գոյություն պահպանել առանց օտարերկրյա օգնության»: Վերջում ճառախոսը եզրակացնում էր, որ նման պայմաններում, առանց օտարերկրյա օգնության. Թուրքիան իրեն չի կարող պաշտպանել նաև հունական ագրեսիայից[39]:

Սակայն Սրվասի կոնգրեսում ի վերջո հաղթանակը Թուրքիայի կատարյալ անկախության կողմնակիցների կողմն էր: Թերևս այդ վճռի ընդունման համար կարևոր դեր խաղաց Մուստաֆա Քեմալի հետևյալ հայտնի դրույթը. «ազգային կարիքներին չհամապատասխանող որոշումները ոչ մի դեպքում չեն կարող դիտվել որպես ազգի համար պարտադիր»:

1919թ. սեպտեմբերի 11-ին Սրվասի կոնգրեսն ընդունեց մանիֆեստ, որտեղ ասվում էր. «Օսմանյան կայսրության տարածքը, որի բնակչությունը ճնշող մեծամասնությամբ կազմում են մահմեդականները... հանդիսանում է մի միասնական ամբողջություն. նրա ոչ մի մասը չի կարող օտարվել Օսմանյան կայսրությունից և ոչ մի պատրվակով ու ոչ մի ձևով»[3K]:

Սա նշանակում էր, որ մերժվում է ամերիկյան մանդատի գաղափարը: Սակայն Սրվասի կոնգրեսի մանիֆեստում, ինչպես նաև Էրզրումի կոնգրեսի եզրափակիչ բանաձևում, այնուամենայնիվ տեղ էր գտնում «ռնշահագրգիռ պետությունների կողմից Թուրքիային օգնություն ցույց տալու ցանկալիության» մասին դրույթը: Ավելին, Մուստաֆա Քեմալը Սրվասի կոնգրեսի անունից ԱՄՆ-ի կառավարությանն ու սենատին հղեց մի հուշագիր ու նամակ, որտեղ հույս էր հայտնվում, որ Ամերիկան բարյացակամ վերաբերմունք կդրսևորի «թուրքական ազգային գործի» նկատմամբ: Ընդորում, այդ փաստաթղթերում հստակ շեշտվում էր, որ թուրքական շարժումը բնավ բոլշևիկյան բնույթ չունի[40]: Միաժամանակ կոնգրեսի մասնակիցների կողմից խնդրվում էր Թուրքիա ուղարկել ամերիկյան սենատի անդամներից կազմված մի հանձնաժողով, որպեսզի «շահագրգռված ազգի պարզ հայացքով վերջինս ուսումնասիրի Թուրքիայում գոյություն ունեցող իրական վիճակը և թույլ չտրվի, որ խաղաղության պայմանագրի որոշմամբ Օսմանյան կայսրության տարածքները տրվեն ուրիշներին»[4D]: Այսպիսով մանդատի վերաբերյալ և ոչ մի խոսք: Ըստ էության մանդատի դեմ արտահայտվեցին ոչ միայն Էրզրումի և Սրվասի կոնգրեսները, այլև քեմալական նորաստեղծ բանակի հրամանատարությունը: Ի պատասխան Քեմալի կողմից ուղարկված հեռագրական հարցումների, հրամանատարների մեծամասնությունը դեմ արտահայտվեց որևէ երկրի մանդատ ընդունելուն[41]:

1919թ. հոկտեմբերի երկրորդ կեսին Ամասիայում տեղի ունեցավ Մուստաֆա Քեմալի հանդիպումը Կ.Պոլսի սուլթանական կառավարության ներկայացուցչի հետ: Քննարկման նյութը առաջիկայում խորհրդարանի գումարման հարցն էր: Կողմերը ամերիկյան մանդատին վերաբե-

ռալ խնդրի կապակցությամբ իրենց վերաբերմունքը ձևակերպեցին այն առումով, որ դա մի միջոց է Թուրքիայի տեխնիկական, արդյունաբերական և տնտեսական կարիքները բավարարելու համար, սակայն պայմանով, որ ամբողջապես պահպանվի Թուրքիայի անկախությունը՝ համաձայն Սըվասի կոնգրեսի մանիֆեստի 7-րդ հոդվածի[42]:

Սա փաստորեն նշանակում էր, որ քեմալական իշխանությունները փակում էին Կ.Պոլսի, նեղուցների և Անատոլիայի նկատմամբ ամերիկյան մանդատի վերաբերյալ հարցը: Միջազգային ատյանների օրակարգում, սակայն, դեռ շարունակում էր մնալ Հայաստանի մանդատի հարցը: 1919թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ-ի սենատ մտցված առաջարկը Վերսալի պայմանագիրը հաստատելու վերաբերյալ չապահովեց անհրաժեշտ քանակությամբ ձայներ[43]: Հետևաբար օդից կախված էր մնում նաև Հայաստանի նկատմամբ մանդատի հարցը: Գնալով ամերիկյան մամուլում և ընդդիմության շրջանակներում ավելի ու ավելի բացահայտ կերպով էին հնչում ձայներ այն մասին, որ անիմաստ է Հայաստանի համար ծախսել դրամ և կատարել զոհողություններ: Ի վերջո 1920թ. մայիսի 30-ին Սիացյալ Նահանգների սենատը մերժեց վերցնել Հայաստանի մանդատը:

VAHAN BAYBURDYAN

ON THE TURKISH-AMERICAN RELATIONSHIP IN RESPECT OF DEVELOPMENTS AROUND THE ARMENIAN QUESTION DURING THE KEMALIST MOVEMENT

The article examines the Turkish-American relationship in respect of developments around the Armenian Question during the Kemalian Movement in Turkey. It points out that as early as in the spring of 1917, the US, after it became engaged in the World War, started to display much of an interest in the "Near East" problems, including, among others, the Armenian Question. US President Woodrow Wilson, when he published his famous "14 Points" also known as the Wilson Peace Plan, referred also to the Armenian Question, which he viewed from a standpoint of creating the new world order.

The Armenian Question appeared in the agenda of the international conference summoned in Paris in 1919, but the Turkish delegation led by Senior Vizier Damad Ferid Pasha tried to jeopardize any attempt at positive settlement of the Question. In effect, the Sultan's Government in Istanbul and the Kemalians were in perfect agreement as to their strive to jeopardize the Question and, despite their fundamental discrepancies on some other problems, they stood on a strong joint platform in respect of the Armenian Question.

The Article provides a comprehensive analysis of the American mandate over Armenia, which was most warmly advocated by President Woodrow Wilson. The Article further sheds some light on the so-called "joint mandate" of the US over

Turkey. To this end, it is emphasized that the political forces active in Turkey's political arena had absolutely different positions on the idea of a "joint mandate".

During the congresses of Erzurum and Sivas held by the Kemalians in 1919, there were active discussions of the Turkish-American relationship, including the issue of a joint American mandate over Turkey. The Article highlights in this respect that the Kemalians did not have a common position on the said issue. The leader of Turkey's millc-nationalists Mustafa Kemal advocated complete independence of Turkey, which by default implied rejection of the mandate idea.

The National Vow taken by the Kemalians exhaustively rejected the application concerning an American mandate. This document, which was an extensive plan of the Kemalians. declared that Turkey's territory was a single whole, and that any part of it could not be detached from it in either way regardless of cause.

Thus, the National Vow finally declined the possibility of an American mandate over Armenia and, more broadly, one over Turkey.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Шпилькова В.И., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920гг.), М., 1960, с. 36-38.
2. Бекер Р., Вудро Вильсон, Мировая война. Версальский мир. М.-Пг., 1923, с.96.
3. "Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference", Vol. I, Washington, 1942, p.33.
4. Pernot M., La question turque, P., 1923, s.263.
5. Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 208-209.
6. Williams W.A. Some Presidents. From Wilson to Nixon, New York, 1972, p. 31.
7. Ключников Ю.В., Сабанин А.В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, т. 2, От империалистической войны до снятия блокады с Советской России, М., 1926, с. 109.
8. "Papers Relating ...", Vol. II, Washington, 1942, p.272.
9. Lansing R. The Peace Negotiations. A Personal Narrative, L., 1927, p. 171.
10. Lamont T., Across World Frontiers, New York, 1950, p. 112.
11. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т.1, М., 1929, с. 29-30.
12. Reponce du président de la Conférence de la Paix au Memorandum présente par la délegation Ottomane. Paris, 25 juin, 1919, s. 1-4.
13. "Papers Relating...", Vol. VI, p.691-694.
14. Նույն տեղում, էջ 711:
15. Նույն տեղում, էջ 577-580:
16. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 291.
17. "Papers Relating...", Vol. V, p.707-711.
18. Ллойд Джордж, Правда о мирных..., т. 2, с. 393.
19. The King – Crane Report on the Near East. A Superessed official Document of the US Government. Editor and Publisher. LV, • 27 (December 2, 1922).
20. Խատիսյան Ա., Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968թ. էջ 190-191:

21. Տե՛ս Report of the Armenian Military Mission to Armenia. May. Gen. James Harbord US Army. Washington, 1919.
22. "Papers Relating...", Vol. V. p.711.
23. Riddel G.A.. Lord Riddel's Intimate Diary of the Peace Conference and After. 1918-1923, L., 1933. p. 19.
24. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. II, М., 1932, с. 366.
25. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 382.
26. Նույն տեղում, էջ 87-88:
27. Նույն տեղում, էջ 89-90:
28. Նույն տեղում, էջ 92:
29. Տե՛ս Миллер А.Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с.166.
30. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 93-95.
31. Նույն տեղում:
32. Նույն տեղում, էջ 97-100:
33. Миллер А.Ф., նշվ. աշխ., էջ 166: Տե՛ս նաև Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с.103.
34. "Documents on the British Foreign Policy. 1919-1939. First Serics. 1919", Vol. IV, L., 1952, p.550-552.
35. Նույն տեղում, էջ 566-567:
36. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 303.
37. Նույն տեղում, էջ 106-111:
38. Askun V.E., Sivas Kongresi, Istanbul, 1963, s. 127.
39. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 419.
40. "Papers Relating...", Vol. II, p.875-888.
41. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 2, с. 223, 229-230.
42. Նույն տեղում, էջ 56-57:
43. "Papers Relating...", Vol. XIII, p. 9.